Ծառայությունների մատուցման
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ/ ՕՖերտա

ք. Երևան ——————————թ.

«ՎԵԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, հետագայում՝ Կատարող, ի դեմս տնօրեն Ա.Տոնեյանի առաջարկում է ինտերնետ հասանելիության ծառայություններ հետևյալ պայմաններով.

1. Պայմանագրի առարկա

Կատարողը մատուցում է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ:

Ծառայությունների ցանկը նշված է սույն Պայմանագրին կից հավելվածներում:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավորվում է.

2.1.1 ապահովել տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ՝ տեխնիկական պայմանների առկայության դեպքերում, ընդ որում կապի հասանելիությունը պետք է ապահովվի անմիջապես Բաժանորդի կողմից կանխավճարի իրականացումից հետո

2.1.2 տրամադրել մեկ IP հասցե,

2.1.3 կատարել ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ գրանցումները պայմանագրի գործողության ողջ ժամկետում,իրականացնել տրամադրվող կապի շուրջօրյա վերահսկում և կառավարում, հնարավորության դեպքում նախապես տեղեկացնել Բաժանորդին պրոֆիլակտիկ աշխատանքների կամ այլ պարագաների մասին, որոնք կարող են ժամանակավորապես ընդհատել ծառայությունների մատուցումը

2.1.4 անհրաժեշտության դեպքում իրականացնել կապը ապահովող սարքավորումների տեղադրման և կարգավորման աշխատանքներ,

2.1.5 Բաժանորդին ընձեռել հնարավորություն Կատարողի էլեկտրոնային կայքից տեղեկություն ստանալ իր տրաֆիկի ծավալների վերաբերյալ, ինչի համար Բաժանորդին հատկացնել համապատասխան մուտքային անուն և ծածկագիր,

2.1.6 Բաժանորդի պահանջով տրամադրել վերջինիս օգտագործած տրաֆիկի ծավալների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն:

2.2. Բաժանորդը պարտավորվում է.

2.2.1 հետևել իր օգտագործած տրաֆիկի ծավալներին կետ 2.1.6-ով նախատեսված կայք էջից, ստանալ տեղեկատվություն կանխավճարի մնացորդի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն ծառայության տիպի, արագությունների և այլնի վերաբերյալ, ինչի գծով անհամաձայնություն ունենալու դեպքում անհապաղ տեղեկացնել Կատարողին, ժամանակին վավերացնել պայմանագրով և հավելվածներով նախատեսված և իրեն ներկայացված փաստաթղթերը և կատարել բոլոր վճարումները,

2.2.2 սույն Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման նպատակով ապահովել Կատարողի աշխատակիցների մուտքը Բաժանորդի տարածք, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ պայմաններ Բաժանորդի տարածքում տեղադրված և կապ ապահովող սարքավորումների կարգավորման համար,

2.2.3 պահպանել համակարգչային ցանցերում գործող ընդհանուր օրինակարգը,

2.2.4 առանց Կատարողի հետ համաձայնեցման չկատարել փոփոխություններ կապի համար տեղադրված սարքավորումների և ծրագրային ապահովման հետ,

2.2.5 բացառել կամ հնարավորինս նվազեցնել իր կողմից կապի անհարկի ծանրաբեռնելու դեպքերը (օրինակ՝ ցանցային կամ համակարգչային վարակիչների տարածում, էլեկտրոնային նամակներով հեղեղում (spaming) և այլն): Հակառակ դեպքում, ինչպես նաև Բաժանորդի կողմից հակերային գործողությունների (մասնավորապես՝ վնասաբեր ծրագրերի տարածում, չարտոնված մուտքի կամ այն իրականացնելու փորձի արձանագրում) հայտնաբերման դեպքում, որը կարող է վնաս հասցնել Կատարողին կամ երրորդ անձին, Կատարողն իրավունք ունի առանց

նախազգուշացնելու միակողմանի ձեռնարկել համապատասխան հակազդող բնույթի միջոցառումներ (օրինակ՝ տրաֆիկի որոշ տիպերի թողանցման սահմանափակում), ընդհուպ մինչև Բաժանորդի կապի անջատում: Ծառայությունների լիարժեք վերսկսումը իրականացվում է միայն Բաժանորդի կողմից սույն կետով նախատեսված պարտավորությունները կատարելուց հետո,

2.2.6 տվյալ օրվա տրաֆիկի ծավալի վերաբերյալ իր անհամաձայնությունը հայտնել Կատարողին այդ օրվա ավարտից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո կողմերը իրենց տրամադրության տակ գտնվող տվյալների հիման վրա փորձում են ողջամիտ ժամկետներում գալ ընդհանուր եզրակացության: Եթե Բաժանորդն իր անհամաձայնությունը հայտնում է նշված ժամկետից հետո, ապա Կատարողն իրավունք ունի չքննարկել հարցը: Այդ դեպքում, տվյալ օրվան վերաբերվող ծառայությունները համարվում են մատուցված Կատարողի և ընդունված Բաժանորդի կողմից:

2.2.7 Բաժանորդի կողմից ծառայության որակի վերաբերյալ բողոք ներկայացնելու դեպքում հարցը պետք է քննարկվի ոչ ուշ 15 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.8 Եթե ուսումնասիրության ընթացքում կապացուցվի, որ որակի անկումը կամ կապի խափանումը տեղի է ունեցել Կատարողի մեղքով, ապա Կատարողը պետք է իրականացնի փոխհատուցում, սակայն հաշվի առնելով Պայմանագրի 3.4 կետը,

2.2.9 Փոխհատուցումը տրամադրվում է, եթե ծառայությունների նախատեսված (պլանային) ընդհատման կամ բաժանորդի դիմումի հիման վրա՝ ծառայությունների չնախատեսված ընդհատման տևողությունը հաշվարկային ժամանակահատվածում գերազանցում է 24 ժամը, որը չի ներառում բաժանորդի պատճառով ծառայություններ մատուցողի կողմից ընդհատումը վերականգնելու անհնարինության, գծի ենթակառուցվածքի կառուցման (տեղադրման կամ տեղափոխման) աշխատանքների շրջանակում ծառայություններ մատուցողի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներով կամ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից սահմանված՝ էլեկտրամատակարարման թույլատրելի պլանային, վթարային ընդհատմամբ, ինչպես նաև բաժանորդի էլեկտրամատակարարման թույլատրելի դադարեցմամբ պայմանավորված ծառայությունների մատուցման ընդհատման ժամանակահատվածները:

2.2.10 Կետ 2.2.9-ում նշված դեպքում ծառայություններ մատուցողը ծառայությունների մատուցման վճար չի գանձում առնվազն ծառայությունների ընդհատման կամ ծառայությունների որակի անկման ժամանակահատվածի համար, իսկ եթե ծառայությունների մատուցման վճարը գանձվել է նախապես, այն փոխհատուցվում է առնվազն ծառայությունների ընդհատման կամ ծառայությունների որակի անկման ժամանակահատվածի համար հաշվարկված ծառայությունների մատուցման վճարի չափով՝ բայց ոչ ավելի, քան տվյալ հաշվարկային ժամանակահատվածի համար ծառայությունների մատուցման վճարի չափն է: Փոխհատուցման տրամադրման ժամկետը չպետք է գերազանցի ծառայությունների որակի անկման կամ ծառայությունների ընդհատման (ներառյալ՝ խափանման կամ անսարքության) ամսվան հաջորդող երկրորդ ամսվա վերջին օրը:

2.Փոխհատուցում կամ ծառայություններ մատուցողի կողմից նախապես գանձված վճարը հետ ստանալու գրավոր դիմումը բաժանորդի կողմից ծառայություններ մատուցողին ներկայացվում է մինչև ծառայությունների մատուցման դիմաց վճարման համար ծառայություններ մատուցողի կողմից սահմանված ժամկետի ավարտը կամ մինչև հաշվարկային ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը: Բաժանորդի կողմից ծառայություններ մատուցողին ներկայացվող գրավոր դիմումը առնվազն ներառում է մատուցված ծառայությունները պայմանագրով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու մասին հիմնավոր տեղեկություններ և նշում ծառայության ընդհատման կամ որակի անկման խնդրի բացահայտման մասին ծառայություններ մատուցողին նախապես (ծառայության ընդհատման կամ որակի անկման ընթացքում) տեղեկացրած լինելու վերաբերյալ, իսկ օրենքով նախատեսված դեպքում նաև ծառայություններ մատուցողի կողմից ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանած ընթացակարգով՝ ինտերնետ հասանելիության ծառայությունների տվյալների հոսքի ներբեռնման և վերբեռնման արագության չափման տվյալներ՝ ծառայություններ մատուցողի կողմից առաջարկվող ծրագրային համակարգի միջոցով, որին բաժանորդների հասանելիությունն ապահովվում է ծառայություններ մատուցողի կողմից:

2.2.11 գաղտնի պահել և չտրամադրել երրորդ կողմին միմյանց վերաբերյալ այնպիսի տվյալներ, որոնց օգտագործումը (երրորդ անձի կողմից) կարող է նյութական կամ բարոյական վնաս հասցնել մյուս կողմին: Այդպիսի տվյալներից են կոմերցիոն բնույթի տեղեկություններ, տեխնիկական տվյալներ և լուծումներ, ծածկագրեր և ցանցային այլ ռեկվիզիտներ, տրաֆիկի վերաբերյալ տեղեկություններ: Այդպիսի տվյալներ կարող են տրամադրվել երրորդ կողմին միայն ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

2.3. Պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների տեխնիկական, ֆինանսական և այլ հարցերի օպերատիվ քննարկման և լուծման նպատակով կողմերը հայտնում են միմյանց համապատասխան կոնտակտային տեղեկություններ (հեռախոսահամարներ, էլեկտրոնային փոստ և այլն):

2.4. Կողմերը պարտավորվում են միմյանց հնարավորինս արագ տեղյակ պահել ի հայտ եկած անցանկալի երևույթների վերաբերյալ, որոնց առկայությունը խոչընդոտում է սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների լիարժեք մատուցելու և ստանալու գործընթացին: Եթե այդպիսի խոչընդոտը գտնվում է որևէ կողմի ազդեցության ներքո, ապա այդ կողմը պարտավորվում է համապատասխան միջոցառումների շնորհիվ և հնարավորինս սեղմ ժամկետներում վերացնել այն:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1. Պայմանագրի շրջանակներում կողմերի պատասխանատվությունները կարգավորվում են համաձայն սույն պայմանագրի դրույթների:

3.2. Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման ընթացքում, կամ նրանց ընդհատման ժամանակ, որակի և այլ գործողությունների հետևանքով Բաժանորդին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասների, այդ թվում բաց թողած օգուտների համար:

3.3. Սույն Պայմանագրի շրջանակներում Կատարողը չի վերահսկում և պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կամ երրորդ անձի առաջ Բաժանորդի կողմից կամ Բաժանորդին ուղարկված տեղեկատվության պարունակության և բովանդակության համար:

3.4. Կատարողը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի առաջ իր ազդեցության ոլորտից դուրս գտնվող հանգամանքերի համար, ինչի հետևանքով կարող է խոչընդոտվել Բաժանորդի աշխատանքը: Այդպիսի հանգամանքերից են օրինակ՝ Ինտերնետ ցանցի որոշ հատվածի հետ կապի ցածր որակը կամ կապի բացակայությունը:

4. Լրացուցիչ պայմաններ

4.1. Այն դեպքում, երբ կապը ապահովող սարքավորումները Կատարողի կողմից տեղադրվում, վաճառվում կամ վարձակալության են հանձնվում Բաժանորդին, կողմերը համապատասխան հավելվածով կամ այլ փաստաթղթով վավերացնում են վերնշված գործարքների անհրաժեշտ պայմանները:

4.2. Կողմերի համաձայնությամբ Բաժանորդին ծառայություններ կարող են մատուցվել Կատարողին պատկանող սարքավորումներով:

5. Վճարումներ, ծառայությունների մատուցման և վճարման կանոնակարգ

5.1. Ծառայությունների դիմաց վճարումները Բաժանորդը կատարում է համաձայն սույն Պայմանագրին կից և նրա անբաժանելի մասը հանդիսացող Հավելվածում/Հավելվածներում ներկայացված գնացուցակի և կարգի:

5.2. Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են կանխավճարային սկզբունքով՝ կանխավճարային գումարին համապատասխան ծավալի չափով:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են փուլերով՝ յուրաքանչյուրը 7,31,45,90 և այլ օր տևողությամբ: Փուլը սկսվում է Բաժանորդին տրամադրված IP հասցեի ակտիվացման և Բաժանորդի կողմից կատարված կանխավճարի օրվանից: Փուլն ավարտվելուց հետո անմիջապես սկսվում է հաջորդ փուլը, քանի դեռ Բաժանորդի կանխավճարային մնացորդը բավարար է նոր փուլ սկսելու համար: Հակառակ դեպքում ծառայությունների մատուցումը ժամանակավոր կընդհատվի մինչև Բաժանորդի կողմից նոր կանխավճարի կատարումը:

5.4. Ըստ Բաժանորդի ցանկության փուլը կարող է վաղաժամկետ դադարեցվել: Այդ դեպքում ընթացիկ փուլի ծառայության համար նախատեսված գումարը համարվում է իրացված ամբողջովին և

ենթակա չէ վերադարձման: Թույլատրվում է նաև փուլի ընթացքում կատարել ծառայության փոփոխություն՝ անցնելով փոքր ծավալով ծառայությունից ավելի մեծ ծավալով ծառայության: Այդ դեպքում փուլի ժամկետը չի փոփոխվում և հաշվարկն իրականացվում է ավելի մեծ ծավալով ծառայության գումարին համապատասխան չափով :

5.5. Կ.5.3-ում նշված փուլի ընթացքում Կատարողի պատճառով մեկ ժամից ավել ծառայությունների ընդհատման դեպքերում փուլի տևողությունը երկարեցվում է կապի ընդհատման ժամաքանակի չափով:

5.6. Մատուցված ծառայությունների դիմաց հաշիվ ֆակտուրաների տրամադրումը Կատարողի կողմից կատարվում է ըստ Բաժանորդի պահանջի:

5.7. Եթե մինչ պայմանագրի դադարեցումը Բաժանորդը լրիվ կատարել է իր պարտավորությունները, ապա վերահաշվարկի արդյունքում Բաժանորդին վերադարձվում է կանխավճարային գումարի մնացորդը, որը պակասեցվում է մինչև 5 տոկոսի չափով, հաշվի առած կետ 5.4-ի պահանջը:
Կանխավճարային գումարի վերադարձի հետ կապված որևէ այլ լրացուցիչ վճարումներ Բաժանորդին չեն նախատեսվում:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն

6.1. Անհաղթահարելի ուժի հետևանքով իրենց պարտավորությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ չկատարելու համար կողմերը պատասխանատվություն չեն կրում:

6.2. Սույն Պայմանագրի շրջանակներում անհաղթահարելի ուժ է համարվում տարերային աղետներ, պատերազմ, զանգվածային անկարգություններ, օրենսդիր մարմնի գործողություններ և կողմերի վերահսկողությունից դուրս այլ նման իրադարձություններ:

7. Պայմանագրի դադարեցում կամ ժամանակավոր ընդհատման պայմանները

7.1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ընդհատել պայմանագիրը մյուս կողմին գրավոր նախազգուշացնելուց 10 օր հետո, այն դեպքում, երբ մյուս կողմը չի կատարում սույն պայմանագրում նշված պարտավորությունները:

7.2. Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ ժամանակավոր ընդհատվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.3. Պայմանագրի դադարեցման կամ ժամանակավոր ընդհատման դեպքերում հաշվարկները կատարվում են ըստ կետ 5.4-ի:

8. Փոփոխություններ

8.1. Պայմանագրում և Հավելվածներում լրացումներ, փոփոխություններ՝ կապված նոր ծառայությունների մատուցման կամ պայմանագրի պայմանների փոփոխման հետ, կարող են կատարվել ինչպես երկկողմ գրավոր համաձայնությամբ, այնպես էլ միակողմանիորեն՝ Կատարողի նախաձեռնությամբ: Փոփոխված պայմանները ուժի մեջ են մտնում Կատարողի www.web.am ինտերնետային կայքում կամ սպասարկման բաժիններում նոր պայմանների մասին տեղեկատվության տրամադրման օրվանից: Եթե նոր պայմանները չեն ընդունվում Բաժանորդի կողմից, Կատարողն իրավունք ունի դադարեցնել կամ ժամանակավոր ընդհատել սույն պայմանագիրը:

9. Պայմանագրի գործողության ժամկետը

9.1. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

9.2. Սույն Պայմանագիրը գործում է վեց ամիս: Գործողության ժամկետը պարբերաբար համարվում է երկարացված երեքական ամսով, եթե կողմերից ոչ մեկը գրավոր չի նախազգուշացնում մյուս կողմին սույն Պայմանագրի գործողության դադարեցման մասին հերթական երեք ամսի ավարտից 15 օր առաջ:

9.3. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրված է մեկ օրինակ:

ՀԱՎԵԼՎԱԾ
Ծառայությունների մատուցման
ՕՖերտա /ՊԱՅՄԱՆԱԳԻՐ/

ք. Երևան ——————————թ.

Սույն Հավելվածով վավերացվում է կողմերի համաձայնությունը հետևյալի մասին.

1. Ծառայություններ և արժեքներ

1.1. Արագության սահմանափակմամբ փաթեթ (ԱՍ Փաթեթ)

Փաթեթ	Արժեք դրամ	Առավելագույն արագություն up/down(մգբիթ/վրկ)	Փուլի տևողություն (օր/ամիս)
H1-D7	1500	12	7
H2-D7	2400	16	7
H3-D7	2900	24	7
H4-D7	4000	32	7
H1-D45	7800	12	45
H2-D45	11100	16	45
H3-D45	13800	24	45
H4-D45	21300	32	45
H1-M6	31500	12	6 ամիս
H1-M12	60000	12	12 ամիս
H1-D31	5400	12	31
H2-D31	**7800**	**16**	**31**
H3-D31	9600	24	31
H4-D31	15000	32	31
U_1024	36000	36	31

1.2. Ծառայությունների ակտիվացում և ուղիղ գծի պահպանում

Եթե Բաժանորդը համաձայն Պայմանագրի չի կատարում նոր կանխավճար կամ չի վերականգնում պայմանագրով նախատեսված ծառայությունները 2 ամսվա ընթացքում, ապա Կատարողին իրավունք է վերապահվում միակողմանի դադարեցնել Պայմանագիրը, որի հետևանքով Բաժանորդը կորցնում է իրեն հատկացված ցանցային ռեկվիզիտները և ռեսուրսները: